Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ութ Յ ՈՒ Ն N5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

12.12.2019 **ք.Երևան**

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 34 անդամներից 29-ը:

(գրանցացուցակը կցվում է)

Գիտական խորհրդի անդամները հաստատեցին նիստի օրակարգը մեկ հարցի ավելացումով:

Օրակարգ՝

1. Սպորտային մանկավարժության և կառավարման ֆակուլտետի ամբիոններում 2017-2018, 2018-2019 ուստարիների «Մարզամանկավարժական կատարելագործում» առարկայի դասավանդման որակի մասին:

(Զեկուցող՝ հանձնաժողովի նախագահ,դոցենտ՝ Խ.Հարությունյան)

2. 2017-2018, 2018-2019 ուստարիներին անցկացված բաց դասերի և փոխադարձ դասալսումների արդյունքների մասին:

(Զեկուցող՝ ուսումնական բաժնի պետ՝ Գ.Հայրապետյան)

3.ՖԴՏ և մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Դմիտրի Վդովինի՝ «Методика обучения родителей основам физического воспитания детей с аутизмом» ատենախոսության թեմայի և գիտական ղեկավար՝ պրոֆեսոր Ելենա Հակոբյանի հաստատման մասին:

(Զեկուցող՝ ուսումնագիտական աշխատանքների գծով

պրոռեկտոր պրոֆեսոր՝ Գ.Սարգսյան)

4.Ֆիզիոլոգիայի և սպորտային բժշկության ամբիոնի հայցորդ Ելենա Բոլոտովայի ՝ «Особенности методики физического воспитания в развитии навыков пространственной ориентации у детей с аутосимптоматикой» ատենախոսության թեմայի և գիտական ղեկավար՝ դոցենտ Նունե Տեր-Մարգարյանի հաստատման մասին:

(Զեկուցող՝ ուսումնագիտական աշխատանքների գծով

պրոռեկտոր պրոֆեսոր՝ Գ.Սարգսյան)

5.Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և անատոմիայի ամբիոնի հայցորդ Անաստասիա Մատվիևսկայայի «Социальная инклюзия детей с нарушениями психического развития средствами физической культуры» ատենախոսության թեմայի և գիտական ղեկավար պրոֆեսոր Սուսաննա Հովեյանի հաստատման մասին:

(Զեկուցող՝ ուսումնագիտական աշխատանքների գծով

պրոռեկտոր պրոֆեսոր՝ Գ.Սարգսյան)

6.Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցորդ Գոհար Մուրադյանի՝ <<Ուսանող-հեռուստալրագրողների մասնագիտական կոմպետենցիաների հսկման և գնահատման համակարգը ֆիզկուլտուրային-մարզական բուհերում>> ատենախոսության թեմայի և գիտական ղեկավար պրոֆեսոր Աշոտ Զատինյանի հաստատման մասին:

(Զեկուցող՝ ուսումնագիտական աշխատանքների գծով

պրոռեկտոր պրոֆեսոր՝ Գ.Սարգսյան)

7.ՀՖԿՍՊԻ քննական գործընթացի կազմակերպման ընթացակարգի հաստատման մասին:

(Զեկուցող՝ իրավախորհրդատու՝ Օ.Պետրոսյան)

8.ՀՖԿՍՊԻ բակալավրի ավարտական աշխատանքի կառուցվածքը և ներկայացվող պահանջների հաստատման մասին:

(Զեկուցող՝ իրավախորհրդատու՝ Օ.Պետրոսյան)

9.Կոչումներ շնորհելու և հրատակչախմբագրական խորհրդի կազմի մասին:

(Զեկուցող՝ ռեկտոր, պրոֆեսոր ՝ Դ.Խիթարյան)

1.ԼՍԵՑԻՆ՝ հանձնաժողովի նախագահ, դոցենտ Խ.Հարությունյանին: Նա ներկայացրեց հանձնաժողովի առաջարկությունները ՄՄԿ առարկայի դասավանդման որակի վերաբերյալ:

(Հաշվետվությունը կցվում է)

Ելույթ ունեցան՝ պրոֆեսոր Հ.Բաբայանը, Գ.Մուրադյանը: Նրանք առաջարկություններ ներկայացրեցին հանձնաժողովի աշխատանքի վերաբերյալ: ՈԱԲ բաժնի պետ Գ.Մուրադյանը առաջարկեց վերանայել ՄՄԿ առարկայի դասավանդման որակի մշտադիտարկման և գնահատման ձևաչափը և տեղեկացրեց, որ հետագայում հաստատման կներկայացնի նոր ձևանմուշը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հավանություն տալ հանձնաժողովի կատարած աշխատանքներին:

2.ԼՍԵՑԻՆ՝ ուսումնական բաժնի պետ Գ.Հայրապետյանին: Նա ներկայացրեց 2017-2018, 2018-2019 ուսումնական տարիների բաց դասերի և փոխադարձ դասերի արդյունքները:

(Զեկուցումը կցվում է)

Զեկուցողին տրվեցին հարցեր (Օ.Պետրոսյան, Գ.Սարգսյան, Գ.Մուրադյան) կապված բաց դասերի գնահատման հետ, ներկայացվեց առաջարկություններ ՈԱԲ բաժնի պետ Գ.Մուրադյանի կողմից, մասնավորապես գնահատման հարցաթերթիկի վերաբերյալ: Նա առաջարկեց մշակել բաց դասերի և դասալսումների կազմակերպման արդյունավետության գնահատման ձևաչափ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

3.ԼՍԵՑԻՆ՝ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Գ.Գ.Սարգսյանին: Նա ներկայացրեց Դմիտրի Վդովինի ատենախոսության թեմայի հիմնավորումը :

(Հիմնավորումը կցվում է)

Ելույթ ունեցան ՝պրոֆեոր Ռ.Շառոյանը, պրոֆեսոր Ս.Հովեյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1.Հաստատել ՖԴԱՏ և մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Դմիտրի Վդովինի՝ «Методика обучения родителей основам физического воспитания детей с аутизмом» ատենախոսության թեման ներկայացված մանկավարժության ԺԳ0002 ,,Դասավանդման և դաստիարակության մեթոդիկան,, (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ:

Աուտիզմով երեխաների ծնողների ուսուցման մեթոդիկան ֆիզիկական դաստիարակության հիմունքներին:

2.Գիտական ղեկավար նշանակել պրոֆեսոր Ելենա Հակոբյանին:

4.ԼՍԵՑԻՆ՝ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Գ.Գ.Սարգսյանին: Նա ներկայացրեց հայցորդ Ելենա Բոլոտովայի ատենախոսության թեմայի հիմնավորումը:

(Հիմնավորումը կցվում է)

Ելույթ ունեցան՝ պրոֆեսոր Հ.Բաբայանը, դոցենտ Ն.Տեր-Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1.Հաստատել ֆիզիկական և սպորտային բժշկության ամբիոնի հայցորդ Ելենա Բոլոտովայի՝ «Особенности методики физического воспитания в развитии навыков пространственной ориентации у детей с аутосимптоматикой» ատենախոսության թեման ներկայացված մանկավարժության ԺԳ0002 ,,Դասավանդման և դաստիարակուլության մեթոդիկա,, (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ:

Աուտիզմով երեխաների ֆիզիկական դաստիարակության մեթոդիկայի առանձնահատկությունները տարածական կողմնորոշման հմտությունների ձևավորման փորձում:

2.Գիտական ղեկավար նշանակել դոցենտ Նունե Տեր-Մարգարյանին:

5.ԼՍԵՑԻՆ՝ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Գ.Գ.Սարգսյանին: Նա ներկայացրեց հայցորդ Անաստասիա Մատվիևսկայայի ատենախոսության թեմայի հիմնավորումը:

(Հիմնավորումը կցվում է)

Ելույթ ունեցան՝ պրոֆեսոր Ս.Հովեյանը, պրոֆեսոր Հ.Բաբայանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1.Հաստատել ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և անատոմիայի ամբիոնի հայցորդ Անաստասիա Մատվիևսկայայի «Социальная инклюзия детей с нарушениями психического развития средствами физической культуры» ատենախոսության թեման ներկայացված մանկավարժության ԺԳ0002 ,,Դասավանդման և դաստիարակուզության մեթոդիկա,, (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ:

2.Գիտական ղեկավար նշանակել պրոֆեսոր Սուսաննա Հովեյանին:

6.ԼՍԵՑԻՆ՝ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Գ.Գ.Սարգսյանին: Նա ներկայացրեց սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցորդ Գոհար Մուրադյանի ատենախոսության թեմայի հիմնավորումը:

(Հիմնավորումը կցվում է)

Ելույթ ունեցան՝ պրոֆեսոր Ռ.Շառոյանը, Գ.Մուրադյանը, պրոֆեսոր Հ.Բաբայանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1. Հաստատել սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցորդ Գոհար Մուրադյանի <<Ուսանող-հեռուստալրագրողների մասնագիտական կոմպետենցիաների հսկման և գնահատման համակարգը

ֆիզկուլտուրային-մարզական բուհերում>> ատենախոսության թեման ներկայացված մանկավարժության ԺԳ0002 ,,Դասավանդման և դաստիարակուլթյան մեթոդիկա,, (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ:
2.Գիտական ղեկավար նշանակել պրոֆեսոր Աշոտ Չատինյանին:

7.ԼՍԵՑԻՆ՝ իրավախորհրդատու Օ.Պետրոսյանին: Նա ներկայացրեց ՀՖԿՍՊԻ քննական գործընթացի կազմակերպման ընթացակարգը:
(ընթացակարգը կցվում է)
Հարցը դրվեց քվեարկության՝
կողմ-28
դեմ-1
ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել ՀՖԿՍՊԻ հիմնադրամի քննական գործընթացի կազմակերպման ընթացակարգը:

8.ԼՍԵՑԻՆ՝ Իրավախորհրդատու Օ.Պետրոսյանին: Նա ներկայացրեց բակալավրի ավարտական աշխատանքի կառուցվածքը և ներկայացվող պահանջների մասին:
(Ներկայացվող պահանջները կցվում են)
Հարցը դրվեց քվեարկության՝
Կողմ-29
դեմ-0
ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել ՀՖԿՍՊԻ հիմնադրամի բակալավրի ավարտական աշխատանքի կառուցվածքը և ներկայացվող պահանջները:

9.ԼՍԵՑԻՆ՝ ռեկտորի ժպ պրոֆեսոր Դ.Խիթարյանին: Նա առաջարկեց կոչումներ շնորհելու հրատարակչախմբագրական խորհրդի կազմում ընդգրկել ինստիտուտի պրոֆեսորներին, որոնք ընդգրկված չեն այլ կառույցների աշխատանքներում:
Հարցը դրվեց քվեարկության՝
Կողմ-29
դեմ-0

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել կոչումներ շնորհելու և հրատակչախմբագրական խորհուրդը հետևյալ կազմով՝

1. Ղազարյան Ֆրունզե Գաբրելի-մգդ պրոֆեսոր
2. Աղաջանյան Մարինա Գերասիմի-բգդ պրոֆեսոր
3. Չատինյան Աշոտ Աղվանի-մգդ պրոֆեսոր
4. Հակոբյան Ելենա Սուրենի-մգդ պրոֆեսոր
5. Ստեփանյան Լուսինե Սամվելի-կգթ դոցենտ
6. Տեր-Մարգարյան Նունե Գևորգի-մգթ դոցենտ
7. Գեղամյան Վարդան Ղազարի-հոգ.գ.թ. դոցենտ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Դ.Ս.ԽԻԹԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԴՈՑԵՆՏ՝ Մ.Ռ.ԱՍԱՏՐՅԱՆ